

---

Հ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ. (Հայկական մատենաշար Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության), Երևան, «Գիտություն» հրատ., 2008, 294 էջ:

Ժամանակակից հայ պատմագիտական ուսումնասիրությունները ընթանում են ոչ միայն լայնությամբ, այլև խորությամբ: Դրա վառ օրինակներից է բոլորովին վերջերս լույս տեսած պ. գ. դ., պրոֆ. Համլետ Հարությունյանի սույն մենագրությունը, որը հրատարակվել է Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ: Ճանաչված պատմաբան-գիտնականը ուսումնասիրության նյութ է դարձրել Արևելյան Հայաստանի ինքնատիպ գավառներից մեկի՝ Նոր Բայազետի գավառի համալիր պատմությունը XIX դ. և XX դ. սկզբին:

Հեղինակը լուսաբանել է հարցերի լայն շրջանակ՝ գավառի վարչատարածքային կառուցվածքը, բնակչության ներգաղթը, էթնոժողովրդագրական տեղաշարժերը, սոցիալ-տնտեսական վիճակը, կրթամշակութային և հոգևոր բնույթի բազում այլ հարցեր: Մեր կարծիքով՝ աշխատության մեջ առանձնանում են էթնոժողովրդագրական տեղաշարժերին վերաբերող բաժինները, մի ոլորտ, որը խորհրդային ժամանակաշրջանում երկրորդական պլան էր մղված, և վերջին մեկ-երկու տասնամյակներում պատմական ժողովրդագրությունը դարձել է պատմագիտական ուսումնասիրության առանձին (ինքնուրույն) ոլորտություն: Այս տարիներին ռեգիոնալ կտրվածքով ուսումնասիրություններ են կատարվում և՛ Արևելյան, և՛ Արևմտյան Հայաստանի նահանգների ու գավառների վերաբերյալ: Պետք է նկատի առնել, որ նման հետազոտությունները ունեն ոչ միայն գույտ պատմագիտական, ճանաչողական, այլև քաղաքական որոշակի կարևորություն, որովհետև ժամանակակից իրողությունները պահանջում են հիմնավորել ու ապացուցել այս կամ այն տարածքի էթնիկական պատ-

կանելության պատմական հիմքերն ու ակունքները: Եվ այդ տեսակետից բացառություն չէ նաև Նոր Բայազետի գավառը:

Հեղինակը միանգամայն ճիշտ է վարվել, երբ խնդրի քննությունը սկսել է ավելի վաղ ժամանակներից՝ սկսած XI դ., թե արտաքին, նաև ներքին մի շարք անպաստ հանգամանքների բերումով շարունակաբար «դիմախելովեց Հայաստանի էթնիկ պատկերը» (տես էջ 16), և հայտարարին փոխարինելու եկավ մահմեդական տարրը՝ «խորացավ բնիկ ժողովրդի էթնիկական օտարացման գործընթացը» (էջ 10): Այդ կործանարար ընթացքը հնարավոր եղավ կասեցնել միայն XIX դ. սկզբներին:

Հայ ժողովրդի պատմության մեջ, անշուշտ, շրջադարձ էր Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Հեղինակը կատարել է արևելահայության թվաքանակի ճշգրտում Ռուսաստանին միացման նախօրյակին (57305 մարդ կամ ընդհանուրի 33,8 %) (էջ 31):

Աշխատանքը բազմակողմանի է, այն ոչ միայն պատմագիտական ուսումնասիրություն է, այլև ինչ-որ տեղ նաև ազգագրական, հնագիտական, պատմաաշխարհագրական, նույնիսկ տնտեսագիտական թեքում ունի և այնքան հարուստ է բազմազան նյութերով, որ միաժամանակ կարող է փաստաթղթերի և նյութերի յուրօրինակ տեղեկատու ժողովածուի դեր կատարել նման խնդիրներով զբաղվող ուսումնասիրողների համար: Հեղինակը չի բավարարվել դրանով, նա ավելի հաճախակի տալիս է օգտագործված փաստաթղթերի, նյութերի ու առանձին աշխատությունների գիտական խոր վերլուծություններ ու գնահատականներ:

Մենագրության արժեքը շատ ավելի էն մեծացնում հեղինակի կողմից կազմ-

ված մի քանի տասնյակի հասնող վիճակագրական տարաբնույթ աղյուսակները: Փաստական վավերագիր, կամերալ և վիճակագրական այլ նյութերի հիման վրա թվերի լեզվով ցույց են տրված ներգաղթի ողջ գործընթացը, էթնոժողովրդագրական տեղաշարժերը, մասնավորապես հայ տարրի ու հայկական բնակավայրերի թռիչքային աճի դինամիկան (էջ 85-103): Աշխատության մեջ արվում են ընդհանրացումներ այն մասին, որ պարսկահայերի և արևմտահայերի ներգաղթը մի կողմից փրկեց Արևելյան Հայաստանի խառը բնակչությունն ունեցող շրջանները հայազրկումից, իսկ մյուս կողմից տասնյակ հազարներով կրճատվեց պարսկահայ և արևմտահայ բնակչության թիվը, ուժեղացավ ազգային և սոցիալական ճնշումը, անկում ապրեց տնտեսությունն ու կրթամշակութային կյանքը: Եղած նյութի մանրագնին դիտարկումից երևում է, որ եթե Ռուսաստանին միացման նախօրյակին Նոր Բայազետի գավառի տարածքն զբաղեցնող նախկին երեք մահալներում հայ տարրը կազմում էր ընդամենը 22 %, ապա միացումից հետո այն կազմեց շուրջ 72 % (տես էջ 104):

Այս ամենի կողքին հեղինակն ըստ արժանվույն է գնահատել հայ ազգային գործիչների խաղացած դերը ներգաղթի կազմակերպման գործում:

Հ. Հարությունյանը հարկ եղած դեպքում կատարել է տեղանունների ու բնակավայրերի ստուգաբանություններ՝ անմիջական կապ տեսնելով հայկական հին ու նոր անվանումների միջև, որոնք աղավաղվել էին մահմեդական տիրապետության շրջանում:

Հարկ է նշել, որ նույնպիսի խորագնին դիտողականությամբ են հետազոտված նաև ուսումնասիրության հաջորդ գլուխները՝ նվիրված վարչատարածքային բաժանումներին, գավառի սոցիալ-տնտեսական և կրթամշակութային կյանքի տարաբնույթ խնդիրներին:

Նոր Բայազետի գավառի օրինակով բացահայտված է ռուսական ցարիզմի դասակարգային էությունը: Պրոֆ. Հ. Հարությունյանը ցույց է տալիս, որ ինքնա-

կալական համակարգին ազգային առումով վստահելիության տեսակետից ամենաանվստահելի վիճակում էին հայտնվել հայերը, քանզի դիտվում էին որպես հեղափոխականներ և անջատողականներ: Հիշյալ հարցերը լուսաբանված են ոչ միայն գուտ Նոր Բայազետի գավառի և անգամ Արևելյան Հայաստանի շրջանակներում, այլև համակովկասյան և համառուսական ընդհանուր խորապատկերի վրա:

Վիճակագրական և վավերագիր հարուստ տվյալների հիման վրա ցույց են տրված գավառի բնակչության խտությունը, միգրացիոն գործընթացները, զբաղվածությունը, ազգային, սեռատարիքային կազմը և այլն:

Աշխատության մեջ առանձին էջեր են նվիրված բնակչության արտագաղթին, որը բարդանալու միտում ուներ: Գրքում բացահայտվում են դրա խորացման տնտեսական, վարչաժողովրդագրական և անգամ սոցիալ-հոգեբանական գործոնները: Հեղինակը Նոր Բայազետի գավառի օրինակով անդրադարձել է նաև արևելահայ գյուղի ամենացավոտ հարցերից մեկին՝ հողային խնդրին, ցարիզմի վարած հողային ու հարկային խտրական քաղաքականությանը և այլն:

Հ. Հարությունյանի տեսադաշտից դուրս չեն մնացել գյուղացիական շարժումները (գյուղացիները հրաժարվում էին մուլք վճարելուց և պարհակներ կատարելուց, անհատական կամ համայնքով բողոքում էին կալվածատերերի դեմ, իսկ երբեմն էլ բռնի օգտագործում էին վերջիններիս հողերը, արոտավայրերը և այլն) և ռուսական պատժիչ արշավախմբերի (ռուս զինվորների ու կազակների) կատարած բռնությունները Նոր Բայազետի գավառում:

Անդրկովկասում և Երևանի նահանգում կատարված վարչակառավարման փոփոխությունների հենքի վրա հեղինակը համակողմանիորեն ցույց է տվել Նոր Բայազետի գավառի ինչպես գավառային, այնպես էլ տեղամասային (գյուղական և քաղաքային) վարչակառավարման համակարգը:

Վերը նշյալ արժանիքներից գատ, աշխատության մեջ տեղ են գտել նաև մասնակի վրիպումներ ու թերություններ: Այսպես, օրինակ՝ վարչական բաժանման տեսակետից «մահալը» և «նահիեն» նույնը չեն. նահիեն գյուղախումբ է, իսկ մահալը՝ գավառակը կամ շրջանը (էջ 26): Բացի այդ՝ «земельная лихорадка» բառակապակցությունը «հողային գայթակղության» փոխարեն ավելի ճիշտ կլիներ թարգմանել «հողային տենդ» արտահայտությամբ (էջ 183) կամ Դունդուկովը պետք է կարդալ Դունդուկով (էջ 250):

Դժվար չէ նկատել, որ սույն հիմնահարցը շարունակելի է: Սպասվում է ուսումնասիրության երկրորդ մասը՝ 1914–1921 թթ. ընկած ժամանակահատվածը: Ցանկալի կլիներ, որ ներկա հատորյակը թվագրվեր գիրք «Ա», որին կհաջորդեր գիրք «Բ»:

Այսպիսով, հրապարակի վրա է մի ուշագրավ ուսումնասիրություն, որը, մեր կարծիքով, կարելի է դասել վերջին տարիների հայ պատմագիտական լավագույն աշխատությունների շարքը:

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ